

ՀՈՒՓՍԻՄԵ ՁԱՆՓՈՒԱԳՅԱՆ

ՎՈԼԳԱՅԻ ԱՓԻՆ

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեծ Բոլգար քաղաքը՝ կառուցված Վոլգա և Կամա գետերի հատման վայրում, հանդիսանում էր համանուն թաթարական պետության մայրաքաղաքը։ Այն գտնվում էր արևելքի և արևմուտքի տարանցիկ մայրուղիների խաչմերուկում և հայտնի էր որպես Արևելյան Եվրոպայի խոշորագույն առևտրական կենտրոններից մեկը։ Նրա առավել բարգավաճման շրջանը եղել է XIII—XIV դարերը։

Բոլգար քաղաքը Արևելյան Եվրոպայի վաճառաշահ քաղաքներից էր։ Այնտեղ կատարվում էին առևտրական մեծ գործարքներ, փոխանակվում Հեռավոր ու Մերձավոր Արևելքից և Արևմտյան Եվրոպայից բերված ապրանքները հյուսիսային թանկարժեք մորթիների հետ։ Քաղաքի մեծահարուստ վաճառականները իրենց ձեռքում էին պահում այդ մորթիների (սկյուռ, կզաքիս, սամույր) շատ շահավետ առևտուրը¹։

Համաձայն պատմական և հնագիտական տվյալների, այդ նշանավոր քաղաքի առևտրական գործարքներին մասնակցում էին նաև Հայաստանից եկած վաճառականներ։ Ինչպես ցույց են տալիս հնագիտական նյութերի ուսումնասիրությունները, Բոլգար քաղաքի շուկայում հայ վաճառականները պատահական հյուրեր չէին։ Նրանք վարում էին անընդմեջ և կազմակերպված ոռևտուր։ Հայաստանից հյուսիս էին տանում զանազան գործվածքներ, գորգեր, մետաղի իրեր, զենքեր և դրանց փոխարեն Հայաստան էին բերում հյուսիսի հանրահռչակ մորթիները²։

Համաձայն միջնադարում գոյություն ունեցող սովորության, հեռավոր երկրներից եկած վաճառականներին չէր թույլատրվում իջևանել քաղաքի ներսում. նրանք կարող էին ապաստանել քաղաքի պարիսպներից դուրս կամ մոտակա գյուղերում։ Տարիների ընթացքում այդ ժամանակավոր հանգրվանները վեր են ածվում առևտրականների մշտական բնակավայրերի։

Ահա այդպիսի մի իջևանի ընդարձակումով, առևտրական զաղութավան է ստեղծվում հայ վաճառականների կողմից Բոլգար քաղաքի պարիսպներից դուրս։ Այս ավանի հնագիտական պեղումները, որը կատարվեց Մոսկվայի հնագետների կողմից 1946—1948 թվականներին, հարուստ նյութ է տվել։ Համաձայն պեղման արդյունքների, այդ ավանը մարդաբնակ է եղել դեռևս IX

¹ А. П. Смирнов, Волжские булгары, Труды Государственного исторического музея (ГИТ), вып. XIX, М., 1951.

² А. П. Смирнов, Армянская колония города Болгар, Материалы и исследования по археологии СССР (МИА), вып. 61, էջ 330—350.

դարում³։ Այն գոյատևել է մինչև XV դարի կեսերը, իր ծաղկման շրջանն ապրելով XIII—XIV դարերում։

Հայկական գաղութի պեղումները վարող հնագետների ուշադրության կենտրոնում էին գտնվում «հունական դահլիճ» կոչված քարաշեն շենքի մնացորդները։ Պարզվել է, որ այդ դահլիճը եղել է հայկական երկհարկանի եկեղեցի, կառուցված XIV դարում, նախկին փայտածածկ փոքրիկ եկեղեցու փոխարեն։ Նրա շուրջը եղած դամբարաններից (պեղված են 113 դամբարան) դուրս եկած քիչ, բայց ուշագրավ նյութերը (գործվածքներ, զարդեր) ցույց են տալիս, որ ավանի բնակիչները իրենց կենցաղով ու կուլտուրայով կապված են եղել Հայաստանի հետ։ Պեղված գանգերի մարդաբանական ուսումնասիրությունները պարզել են, որ դրանց մեծ մասը պատկանում են արմենոյիդ տիպին, այսինքն այդ վայրում թաղված են եղել հայեր։

Պեղումներից ստացված նյութերը միակը չեն, որ վկայում են վուլգայի ափին գտնվող այդ նշանավոր քաղաքում հայ բնակչության գոյության մասին։ Նախկին Մեծ Բուլգար քաղաքի տերիտորիայի վրա ուսական Ուսպենսկի վանքի կառուցման կապակցությամբ դեռևս 1712 թ. երեց Միխայիլովը կազմում է այդ վայրերի հնությունների ցուցակը, ուր հիշատակում է նաև հայկական արձանագրություններ կրող տապանաքարեր։ 1722 թ., երբ Պետրոս Մեծը այցելում է Բուլգար քաղաքի հնավայրը, կարգադրում է ի մի հավաքել տեղում գտնվող բոլոր արձանագիր քարերը (արաբատառ և հայերեն), հանել նրանց պատճենները, թարգմանել և ուսումնասիրել։

Հայկական արձանագրությունները, որ ուսերենի էր թարգմանել հայագրի ի վան Վասիլը, առաջին անգամ հրապարակել է Ի. Լեպեխինը իր ճանապարհորդական օրագրում⁴։

XIX դարի ընթացքում արդեն հայերեն այս արձանագրությունները, մի քանի նոր հայտնաբերվածների հետ միասին, ուսումնասիրվել և հրապարակվել են եվրոպական և ուսական գիտնականների կողմից։ 1919 թ. Պետերբուրգի նյութական կուլտուրայի պատմության ուսական ակադեմիայի աշխատակից Բ. Վ. Միլլերը գործուղվում է Կազան և Բուլգար՝ տեղում եղած հայկական արձանագրությունների հաշվառման համար։ Նա իր երկամսյա աշխատանքի արդյունքները շարադրում է «Об армянских надписях в Болгарах и Казани»⁵ հոդվածում, որտեղ ի մի են բերված նաև մինչ այդ եղած հայերեն արձանագրությունների բոլոր հրատարակությունները. այստեղ նշված են նաև այդ գործի բոլոր երախտավորների անունները։

Բուլգար քաղաքի շուրջը գտնված և գիտությանը հայտնի 7 հայկական արձանագրություններից, այժմ պահպանվել են միայն 4-ը (ավելի ճիշտ՝ 3-ը և մեկի կես մասը)։ Նրանցից մեկը, ամենից լավ պահպանվածը և ընթեռնելին, որը փորագրված է երկու մետր բարձրություն ունեցող քարի վրա (№ 3), այժմ գտնվում է Կազանի պետական համալսարանում, ուր տեղափոխվել է 1915 թ. Կազանի հնագետների և ազգագրագետների ընկերության ջանքերով։

³ А. П. Смирнов, Армянская колония города Болгар, էջ 331։

⁴ И. Лепехин, Дневные записи путешествия, СПб, 1771.

⁵ «Известия Российской Академии Истории Материальной культуры» (ИРАИМК), 4. IV, Л., 1925, էջ 65—80։

Նրկու արձանագրություն գտնվում են Կաղանի գավառագիտական թանգարանում (№№ 6, 7), իսկ շորրորդը՝ Բոլգար քաղաքի հնավայրում (№ 5):

Հայկական արձանագրությունների առաջին գիտական ուսումնասիրությունը կատարել է ֆրանսիացի հայագետ Սեն-Մարտենը, որին Վասիլևի ձեռքով կատարած արձանագրությունների արտագրությունն ու թարգմանությունը ուղարկել է կոմս Պատոցկին՝ արաբագետ Կլապրոտի խնդրանքով (այս վերջինս հրատարակել է Բոլգար քաղաքում գտնված 40-ից ավելի արաբական տապանաքարերի արձանագրություններ):

Սեն-Մարտենը⁶ 1831 թ. հրատարակում է շորս հայկական արձանագրություն և նրանց ֆրանսերեն թարգմանությունները: Իր հոգվածի առաջաբանում գիտնականը հիշատակում է բնագիրն արտագրողի հայոց լեզվին ոչ հմուտ տիրապետելու հանգամանքը և թույլ տված մեծ սխալները: Արձանագրությունները բերվում են այնպես, ինչպես նրանք հրատարակված են ֆրանսիացի հայագետի կողմից:

№ 1. Թիվն ԹՃՁԶ (986—1537) հանգիստ ապավահարին
իմ այրոյ քաղաք եմ պատրոնիկ և մարինոսինյ
արոսի ո վայ գայ քաղաք իմ աստվածասերուկ:

Խիստ աղավաղված այս տառախմբերը Սեն-Մարտենը թարգմանում է ֆրանսերեն այսպես.

«Այս քարը դրված է այս հայտնի քաղաքում հանգուցյալ հայ
նազարոսի և նրա կնոջ Մարինոսի վրա թվկ. 986—1536»:

Սեն-Մարտենը⁷ նախ և առաջ նշում է այս թվագրության անհավանականությունը, քանի որ XVI դարում Բոլգար քաղաքն արդեն ավերված էր և գոյություն չուներ: Այս արձանագրությունն ալթմ գոյություն չունի և մեզ հայտնի է միայն գրականությունից, ուստի ստուգել և ճշտել այն հնարավոր չէ, սակայն համեմատելով արձանագրության տարեթիվը մյուս արձանագրությունների տարեթիվերի հետ, թերևս կարելի է ենթադրել, որ այս դեպքում էլ պետք է լինի էՃՁԶ, այսինքն՝ 786—1337:

Սեն-Մարտենի հրատարակած մյուս արձանագրությունն այսպիսի տեսք ունի⁸.

№ 2. Այս հանգիստապանս Յովանիսին
Որդի Վարդանին թիվ ԵՃՄԷ

Նորից տարեթիվը ընդօրինակման մեջ սխալ է կատարված, էՃՄԷ (1308)-ի փոխարեն կարդացված է՝ ԵՃՄԷ (1108), որ չէր կարող լինել: Առաջարկում ենք № 2 արձանագրությունը կարդալ.

⁶ M. Saint-Martin, Note sur les Inscription arméniennes de Bulgharie, Journal Asiatique, 5. VIII, Paris, 1831, էջ 503—506.


⁷ Նույն տեղում, էջ 504.

⁸ Նույն տեղում:

ԱՅՍ ԶԱՆԳԻՍՏ [ՊԱՐՈՆ] ՅՈՎԱՆԻՍԻՆ
ՈՐԴԻ ՎԱՐԴԱՆԻՆ Թ[ՎԻՆ] ԷՃԾԷ (1308):

Երրորդ արձանագրությունը այն տապանաքարն է (նկ. № 1), որն այժմ գտնվում է Կաղանի համալսարանում: Այս արձանագրությունը հետազայում հրատարակված է մի քանի անգամ: Սեն-Մարտենի ստացած ընդօրինակությունը անփույթ է կատարված, կոպիտ սխալներով. կրկնվում է տարեթիվ արտագրության սխալը՝ ՌՃԶԴ: Բարեբախտաբար Սեն-Մարտենը իր ձեռքի տակ ունեցել է նույնի ավելի բարեխիղճ մի պատճենը՝ կատարված գլխադրերով: Այդ պատճենը, որ նա ստացել էր արևելագետ Խ. Ֆրենից (Պետերբուրգ), հնարավորություն է տվել ճշտել տարեթիվերը ինչպես այս, նույնպես և վերը բերված արձանագրություններում:

Արձանագրության ճշգրտված տարեթիվն է՝ ԷՃԶԴ (1335):



Նկ. № 1.


Այս արձանագրությունը, տարբեր ընդօրինակությունների հիման վրա, վերահրատարակված է 1838 թ. Մ. Բրոսսեի կողմից⁹: Այդ ընդօրինակություններից մեկը կատարված է 1836 թ. Կաֆտաննիկովի ձեռքով, իսկ մյուսը՝ 1819 թվականին՝ փոխգնդապետ Պոտտի: Այս պատճենները նույնպես զերծ չեն սխալներից, հատկապես այն մասերում, որտեղ հատուկ անուններ կան: Այդ սխալները Բրոսսեն ճշտել է միայն 1861 թվականին ավելի հաջող պատճեն ձեռք բերելու շնորհիվ, ուր սակայն, թվականը պատճենավորված է ոչ ճիշտ՝ «ԹՎ ԶԶԴ»¹⁰, մինչդեռ պետք է լինի «Թ ԷՃԶԴ» (նկ. № 2): Առաջարկում ենք հետևյալ ընթերցումը.

№ 3. ԱՅՍ Է ԶԱՆԳԻՍՏ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱՅՍԻՐԻՆ Ե
Ի ՈՂՈՐՄԱԾԻՆ ՊԱՐՈՆ ԱԻԹԻՆ ՈՐԴ
ՈՅ ՊԱՐՈՆ ԹԵՆԵՐԻՆ ՈՐԲ ԿԱՐ
ԴԱՅԲ ՄԵՂԱՅ Թ[ՈՂՈՒԹ]Ի[ԻՆ] ԽՆԴՐԵՅԷԲ
Թ[ՎԻՆ] ԷՃԶԴ (1335):

(Տե՛ս նկ. № 1 և նկ. № 2)

⁹ M. Brosset, Note sur les inscriptions arméniennes de Bulgarie, Bulletin Scientifique, tome III, 1838, Leipzig, էջ 19—20.

¹⁰ М. Н. Броссе, Об армянских надписях в Болгарах, Известия Императорского Археологического общества, том II, СПб, 1861, էջ 182.



նկ. № 2

Սեն-Մարտենի հրատառակած շորրորդ արձանագրությունը բաղկացած է 5 տողից և շատ թերի է։ Ահա այն.

№ 4. ԱՅՍ ՀԱՆԴԻՍՏ....

..ՊԱՐ... ԵԱՎԱՔ

..ՈՐԴ — ՈՅ.. ԱՍԻՐԱՏՆԱ

ԱՐԴ ՈՐՔ ԿԱՐԴԱՅՔ ՄԵՂԱՅ

— ՈՂՈՒ ԽՆԻՐԵՅԷՔ ՍՄ...¹¹

Բրոսսեն Ֆրենի արխիվում գտնվող և Կաֆտաննիկովի կողմից 1836 թ. սև մատիտով կատարված պատճենի միջոցով լրացնում է այս արձանագրությունը, ըստ որի արձանագրությունն ունի ոչ թե հինգ, այլ վեց տող։ Իր հողվածում նա տալիս է միայն ֆրանսերեն թարգմանությունը՝ առանց հայերեն բնագրի. համաձայն որի ստացվում է. «Այս է հանգիստ... եվաֆ մահտեսի թոմաս Վարդ որի կառղայֆ մեղաց թողութիւն խնդրեցէֆ յԱստուծոյ ամէն քվին...»¹².

¹¹ Saint-Martin, նշ. աշխ., էջ 505.

¹² M. Brosset, Note sur les inscriptions arméniennes de Bulgarie, 20.

1. Ceci est la tombe

2. du baron... eval

3. ... du pèlerin Thomes

4. vart, vous, qui liser (ceci)

5. demander la rémission de mes péchés

6. a Dieu, Amen, Ceci fut écrit en l'an...

Այս արձանագրութիւնը այժմ չկա, ուստի ստուգել և ճշտել այն նույն-
պես հնարավոր չէ: Թերեւս զուգակցելով Սեն-Մարտենի հայերեն բնագիրն ու
Բրոսսեի թարգմանութիւնը, կարելի լինի առաջարկել հետևյալ ընթերցումը.


ԱՅՍ ՀԱՆԳԻՍՏ [ԱՍՏՈՒԱՄԱ
ՍԷՐ] ՊԱՐ[Ո]Ն ԱՎԱՔ
[ԻՆ] ՈՐԴԻՈՅ... [ԱՄԻՐԱՏՆԱ]
ԱՐԴ ՈՐՔ ԿԱՐԴԱՅՔ ՄԵՂԱՅ
[Թ]ՈՂՈՒ[ԹԻԻՆ] ԽՆԴՐԵՑԷՔ
[ՅԱՍՏՈՒԾՈՅ ԱՄԷՆ ԹՎԻՆ....]

Արձանագրության թվականը թեև չի պահպանվել, սակայն այն կարելի
է լինի թվագրել 1321-ից հետո, եթե ընդունենք, որ հաջորդ № 5 արձանագրու-
թյան մեջ հիշատակվող Ավագ Պարոն-ը նույնական է այս արձանագրու-
թյան Պարոն Ավագ-ի հետ. հայրը դստեր գերեզմանի վրա տապանաքար է
դրել և մեղաց թողութիւն է խնդրում:

1853 թ. պատմաբան Ն. Բերեզինը իր «Վոլգայի բուլգարներ» աշխատու-
թյունում հրատարակում է երկու հայկական արձանագրութիւն, որոնցից ա-
ռաջինը կրկնութիւն էր (տե՛ս արձ. № 3), իսկ երկրորդը (տե՛ս արձ. № 5)՝ նո-
րահայտ¹³: Այս երկու արձանագրութիւններն էլ, կատարելագործված եղանա-
կով արտանկարված, հրատարակում է Բրոսսեն 1861 թվականին¹⁴.

№ 5. ՅԱՐԿՍ ԱՅՍ ՈՒՆԵԼՈՎ ԶՊԱՏ
ԻԱԿԱՆ ՄԱՐ[ՄԻՆ] ՍԱՌԱՅ ԽԱԹՈՒ
ՆԻՆ ՓՈԽԵՑԱՎ Ի Ք[ՐԻՍՏՈ]Ս ՈՎ ԿԱՐԴԷ
Ք ՄԵՂԱՅ ԹՈՂՈՒԹԻ[ԻՆ] ԽՆԴՐԵՔ Ա[ՍՏՈՒԾՈ]Յ
ՀԱԻՐՆ ԱՎԱՔ ՊԱՐ[ՈՆԻՆ] Ի Թ[ՎԻՆ] ԶՀ (1321):

Այս քարն այժմ գտնվում է Բուլգար քաղաքի հնավայրի մոտ կառուցված
Ուսպենսկի վանքի նորակառույց զանգակատան հիմքում և երևում է միայն
կիսով չափ (նկ. № 3):



Նկ. № 3

¹³ Н. Березин, Булгары на Волге, Казань, 1853, էջ 64—66.

¹⁴ М. Н. Броссе, Об армянских надписях в Болгарах, էջ 183.

Մինչև այս հրատարակված հայկական արձանագրություն կրող տապանաքարերը գտնվել են ոչ իրենց սկզբնական տեղում, այլ Բոլգար քաղաքի տարբեր վայրերում և զլխավորապես Ուսպենսկի վանքի շրջակայքում, ուր կուտակված էին վանքի շինարարության համար պետքական քարերը:

1882 թ. ամռանը հայկական եկեղեցու շրջակայքում գտնվել են ևս երկու տապանաքարեր (տե՛ս արձ. № 6 և № 7): Այդ արձանագրությունները հրատարակել է Ս. Վիսոցկին¹⁵ 1883 թվականին՝ Ք. Պատկանյանի թարգմանությամբ, տալով լուսանկարը և ուսերեն թարգմանությունը:

Վիսոցկու հրատարակած № 6 արձանագրության ընդօրինակությունը (տե՛ս նկ. № 4) թեև աղավաղված է, բայց այն Պատկանյանը բավական ճիշտ է վերծանել¹⁶, այդ է ցույց տալիս Ն. Ֆ. Կալինինի արխիվում գտնվող նույն արձանագրության մեկ այլ ընդօրինակություն (տե՛ս նկ. № 5): Համադրելով այդ երկու ընդօրինակությունները, առաջարկում ենք հետևյալ ընթերցումը.

№ 6. ԱՅՍ ՀԱՆԳ
ԻՍՏ ՊԱՐՈՆ
ԵԱՂՈՒԹԻՆ [ՄԵ]

Ղ[ԱՅ] ՔԱ[ԻՈՒԹԻՆ]
Ա[ՍՏՈՒԱ]Մ ՅԱՒՈՒՐ
ԴԱՏԱՍՏԱՆԻՆ

ԱՅ ԽԱ Զ
ԻՍՏ ՊԱՐՈՆ
ԱՂԻԲԻՆԶ
ՂԻԲԱՅԱ
ԱՅՅԱԻՈՒ
ԴԱԿԻՍԿԱ

նկ. № 4

ԱՅՆԿԸԵԳ
ԻՆ ԲՊԱՆ
ԻԱՊԻԿԻՆԴ
ՊԼԴԴԱԿԱ
ԱՅՅԱԻՈՒ
ԳՅՎԴԱԿԱ

նկ. № 5

¹⁵ Висоцкий, Новая археологическая находка в селе Болгарах, Известия общества археологов Казанского университета (ИОАКУ), том. VII, № 1—8.

¹⁶ Նույն տեղում, էջ 2.

Это есть покон-
ше господина
Агоба (Якова)
(помяни его)

Боже в день
Суда...

Յոթերորդ արձանագրությունը բաղկացած է 3 տողից.

№ 7. ԱՅՍ Է ՀԱՆ

ԳԻՍՏ Յ[Ո]ՍԷՓԻ

Թ[ՎԻՆ] ԷՃԿԷ (1318)

ԱՅՍ Է
ԳԻՍՏ
ԹՎԻՆ ԷՃԿԷ

Նկ. № 6

Պատկանյանը «Յովսէփ» անվան փոխարեն կարդացել է «յաւիտենական», իսկ թվականը վերծանել՝ ԹՎ[ԻՆ] ՇՀ (1121)¹⁷: Սակայն, տեղում կատարած մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Թ տառին միաձուլված մասնիկը ոչ թե Վ պիտի կարդալ, այլ՝ է (7). այդ դեպքում, որքան և աղավաղված, հաջորդ հարյուրավորը չի կարող այլ բան լինել, քան՝ Ճ (100). տասնավորն ու միավորը՝ ԿԷ (67), տարակույս չեն առաջացնում, հետևապես տարեթիվը պետք է կարդալ ոչ թե ԹՎ[ԻՆ] ՇՀ (1121), այլ՝ Թ[ՎԻՆ] ԷՃԿԷ (1318):

Ըստ մեր ընթերցման, արձանագրությունը 200 տարով նորանում է և իր ժամանակով մոտենում Բուղար քաղաքի հայկական մյուս չորս արձանագրություններին, որոնք 1308, 1321, 1335, 1337 թվականներից են:

Հայկական արձանագրություններ են գտնվել նաև Վուլգա և Կամա գետերի ափերին տեղավորված այլ հնավայրերում:

ՍՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Կազանի մասնաճյուղի արխիվում պահված է հնագետ-ազգագրագետ Ն. Ֆ. Կալինինի արխիվը, որտեղ գտնվում են նաև երեք հայկական արձանագրությունների պատճեններ, արտադրված ոչ վարժ և հավանաբար հայերեն շիմացողի կողմից: Դրանցից մեկը, փնչպես արդեն նշել ենք, № 6 արձանագրության կրկնապատճենն է (տե՛ս նկ. № 5), իսկ մյուս երկուսը (տե՛ս արձ. №Ն 8 և 9) բերում ենք ստորև.

¹⁷ Նույն տեղում, էջ 2.

Это есть по-
кой веч...

число 570 (1121).

Ռ-3

№ 8. [ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ] Ռ-2

ԻԱՆ ՊԱՐՈՆԵ ՈՎ [ԿԱՐԴԱՅ]

Ք ՄԵՂԱՅ ԹՈՂՈՒԹ [ԻԻՆ]

ԽՆԴՐԵՑԷՔ [ՆՈՑԱՅ]

ԱՄԷՆ

ԻԱՆՎԱՐՆԻ ՈՎԱԿ
ՔՄԵՂԱՅ ԹՈՂՈՒԹ
ԽՆԴՐԷՑԷՔ ՈՑԱՅ
Ա

նկ. № 7

Թեև չի նշված տապանաքարիս գտնվելու վայրը, բայց հիմք ընդունելով Ն. Ֆ. Կալինինի հիշատակությունը Կամա գետի ափին Կրասնայա Պոլյանա գյուղի մոտ գտնված հայկական արձանագրություն ունեցող տապանաքարի մասին¹⁸, կարելի է ենթադրել, որ խոսքը հենց այս արձանագրության մասին է:

Բնագիրը չլինելու պատճառով ստուգել և տալ ճիշտ ընթերցումը հնարավոր չէ: Թերևս անունը կարելի լինի կարդալ «ՈՒՀԱՆ»: Կասկածելի է թվում նաև չորրորդ տողի «[Ն]ՈՑԱՅ» բառը. տեղին կլինե՞ր այն կարդալ՝ «ՅԱՍՏՈՒՄՈՅ»:

Հաջորդ (№ 9) արձանագրությունը հայտնաբերվել է Կամա գետի ափին գտնվող Կիրևսկայա գյուղի եկեղեցու բակում: Քարը ունեցել է անհավասարակող խորանարդի ձև և բովանդակել է. 6 տող արձանագրություն, 3-ր հարավային կողմին, իսկ 3-ը՝ հյուսիսային: Ըստ Կալինինի արխիվում եղած ընդօրինակության, այն հետևյալ տեսքն ունի.

Հարավային կողմին.

... ՏԱՐԱԺՄ

ԱՂԱԽԻՆՍ ԱՅ ՏՈՒՐՂԱՆ ՄԵԼԻՔՍ ԵՒ ՓՈԽԵՑԱԻ ԱՌ ՔՍ...

...ԹՈՂՈՄԵԶ ԱՌ—ԱՆՄԵԻԹԱՐ ԵՒ ՏԵՐՄՈՒԹԻ

Հյուսիսային կողմին.

.....ՈՐՔ ԿԱՐԴԱՔ ԹՈՂՈՒԹԵ ՄԵՂԱՅ

.....ՄՆՈՂԱՅ ՍՈՐԱ ԳՐԻԳՈՐԱ ԵՒ.....

.....ՔՍ ԱՄ ԱՄԵՆ Ե...

¹⁸ Н. Ф. Калинин, От Сюкиева к Камскому устью. Записки тетюшеского Музея, Казань, 1928, т. 2 12—13.

Ինչպես գրում է Ա. Պ. Սմիրնովը, այս արձանագրությունը իր ժամանակին վերժանել և թարգմանել է Հ. Ա. Օրբելին, և հրատարակված է Ա. Պ. Սմիրնովի հայկական գաղութի մասին տպված հոդվածում¹⁹:

Օրբելու արխիվում պահպանվել է այս արձանագրության վերժանման մի փորձ (ոչ իր ձեռքով), որի հիման վրա էլ, ըստ երևույթին, նա կատարել է թարգմանությունը: Ահա այն.

[Թ]ՎԱ[ԿԱՆԻՆ] ԶԿԷ Ի ՏԱՐԱԺԱՄ ՀԱՍԱԿԻՆ ՅԱՆԿԱՐԾԱԿԻ ՎԱԽՃԱՆԵՑԱԻ
ԱՂԱԽԻՆՍ Ա[ՍՏՈՒԾՈ]Յ ՏՈՒՐՂԱՆ ՄԵԼԻՔՍ ԵՒ ՓՈԽԵՑԱԻ ԱՌ Ք[ՐԻՍՏՈ]Ս
Ա[ՍՏՈՒԱ]Մ

ԹՈՂԼՈՎ ՄԵՋ ՍՈՒԳ ԱՆՄԵԻԹԱՐ ԵՒ ՏՐ[Տ]ՄՈՒԹԻ[ԻՆ]
ԵՏ ԳՐԵԼ ԱՅՍ ՈՐՔ ԿԱՐԴԱՔ ԹՈՂՈՒԹԻ[ԻՆ] ՄԵՂԱՅ
[ԽԵԴՐԵՑԷՔ] ԾՆՈՂԱՅ ՍՈՐԱ ԳՐԻԳՈՐԻ ԵՒ [ԿԵՆԱԿՑԻ]
.....ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏՈՒԱՄ ԱՄԵՆ ԵՒ [ՇԻՆՈՂԱՅԴ]

Տապանաքարի բացահայտության պատճառով հնարավորություն չունենք ստուգելու վերժանման ստուգությունը: Կարծում ենք, սակայն, որ ավելի ճիշտ կլիներ, «ԹՈՂԼՈՎ ՄԵՋ ՍՈՒԳ»-ը կարդալ՝ «ԵՒ ԵԹՈՂ ԶՄԵՋ ՍՈՒԳ», «ՏՐՏՄՈՒԹԻՆ»-ը՝ «ՏՐՏՄՈՒԹԻՆ ՄԵՄ», «ԵՏ ԳՐԵԼ ԱՅՍ»-ը՝ «ԱՐԴ», «ԵՒ ՇԻՆՈՂԱՅԴ»-ը՝ «ԵՒ ԵՂԻՑԻ»:

Գոյություն ունեն մի շարք հիշատակություններ այն մասին, որ դեռևս XIX դարում Բուզար քաղաքի շրջակա գյուղերի տների հիմքերում կարելի էր հանդիպել արձանագիր քարեր, որոնց թվում նաև հայերեն արձանագրություններ: Այժմ վուզա գետի ափին էլեկտրակայաններ կառուցելու և Կամա գետի հունի լայնացման կապակցությամբ, փոխվել է նաև տեղանքը. հին բնակավայրերից շատերը շկան կամ նրանց փոխարեն կառուցված են նորերը: Կատարված հետախուզական աշխատանքներն առայժմ չեն տվել որևէ նոր հայկական արձանագրություն:

Ն. Վիսոցկին իր վերը հիշատակած հոդվածում²⁰, հրատարակում է ևս մի հայկական արձանագրության մնացորդ (նկ. № 8):

Այս արձանագիր տապանաքարը գտնված է Կաղանի Գերմանական Կուրտինա կոչված թաղամասում, որն ինչպես կարծում են, նախկինում եղել է հայկական գերեզմանատուն:

Հայերը Կաղան քաղաքն են տեղափոխվել XV դարի կեսերին, Բուզար քաղաքի ավերումից հետո: Համաձայն եղած ուսումնասիրությունների²¹,

¹⁹ А. П. Смирнов, Армянская колония города Болгар, МИА, 61, էջ 331, Հարավային կողմ.

I. «Лета 767 (1318) преждевременно сопричеслилась (к господу) преставившись
II. раба божия Турган-Мелик и приставилась во Христе
III. оставляя нам скорбь неутешную и владыка мутн (или мури).
Հյուսիսային կողմ.

I. ... дал написать (?) [это]. Вы кто прочтете, оставление грехов...

II. ... родителям ее Григорию...

III. ... Христос бог, Аминь, и устроителей сего...

²⁰ Н. Высоцкий, Новая археологическая находка в селе Болгарах. ЦОАКУ, 4. VII, էջ 3.

²¹ Б. В. Миллер, Об армянских надписях в Болгарах и Казани, ИРАИМК, 4. IV, էջ 69.

այստեղ ևս նրանք բնակություն են հաստատել մի թաղամասում, որի մասին հիշատակություն պահպանվել է երկու «Արմյանսկայա» փողոցների անուններում: Շատ հավանական է, որ այդ թաղամասը հիմնողները եղել են ոչ միայն առևտրականներ, այլ նաև արհեստավորներ: Այդ թաղամասը, որտեղ ենթադրաբար ապրել են հայերը, հայտնի է որպես «մահուղագործների թաղամաս» (Суконная слобода): Թաղի բնակիչները ունեցել են նաև իրենց եկեղեցին: Կազանում գտնված տապանաքարի արձանագրությունը (№ 10) բաղկացած է 4 տողից, շատ թերի է և արտագրված է եղել անփույթ, որոշ տառեր նույնիսկ գլխիվայր: Թերևս առաջին տողի երեք նշանը «Ողորմի» բառի մնացորդն է (նկ. № 8): Երրորդ տողում եղած փակագիրը կարելի է ենթադրաբար բացել, որպես «ԱՄԷՆ»:

Այս տապանաքարը այժմ գոյություն չունի, ուստի ստուգել և վերականգնել արձանագրությունը նույնպես հնարավոր չէ:

Հայկական արձանագրություններ կրող 10 տապանաքարերի առկայությունը Վոլգա գետի ափին, հետաքրքրական փաստ է հայ ժողովրդի առևտրական կապերի պարզաբանման և գաղթօջախների ուսումնասիրման համար: Բոլգար քաղաքի հայկական գաղութի պեղումներից հայտնաբերված ոչ շատ հարուստ, բայց արտահայտիչ նյութերը, սերտ կերպով կապում են այդ հեռավոր գաղութի բնակիչներին մայր Հայաստանի և հատկապես նրա երկու խոշոր քաղաքների՝ Անիի և Դվինի հետ²²:

Այժմ տեսնենք ինչ է տալիս մեզ տապանաքարերի արձանագրությունների նախնական ուսումնասիրությունը:

10 արձանագրություններից 6-ը (№№ 1, 2, 3, 5, 7, 9) թվագրված են, և բոլորն էլ պատկանում են XIV դարին (1308, 1318, 1331, 1335, 1337):

Պեղածո հնագիտական նյութերը ցույց են տվել, որ ինչպես Բոլգար քաղաքը, այնպես և նրա հայկական գաղութը իրենց ծաղկման շրջանն են ապրել XIII—XIV դարերում:

Տապանաքարերը պատկանում են հենց այդ ժամանակին:

Արձանագրությունները հիշատակում են մի քանի անձնանուններ՝ Աւագ, Աւթին, Թեներ, Ամիրատին(“), Յովհաննէս, Մարինոս, Յովսէփ, Նազարոս, Վարդան, Սառա—Խաթուն, Տուրդան—Մելիք:

Այս անձնանունների մեծագույն մասը շատ տարածված հայկական անուններ են, որոնցից մի քանիսը բնորոշ XIII—XIV դարերի համար:

Այսպես. № 5 արձանագրության Ավագ Պարոն ձևով պարոնը, որպես անձնանվան մասնիկ, հանդիպում է հատկապես XIII—XVII դարերում: Սառա իգական անունը նույնպես շատ տարածված է XIII—XIV դարերում և հաճախ

П 25

Տ Է Ն

Ա Ի

Ղ Կ Կ Կ

նկ. № 8

²² Р. М. Джанполадян, О двух тханиях из Ани и Болгарах, Краткие сообщения Института археологии АН СССР (КСИА), вып. 132.

է հանդիպում հայկական գաղթօջախների վիմական արձանագրություններում (Սուրխաթ, Կամենեց):

№ 3 արձանագրության Թեներ անունը հայկական իգական հազվագյուտ անձնանուններից է, Աճառյանի անձնանունների բառարանում այս անունը Թենի ձևով հանդիպում է միայն մեկ անգամ՝ Անիի XV դարի մի շինարարական արձանագրության մեջ²³:

Հնագրագիտական առումով հետաքրքրական են մի շարք տառերի գրության ձևերը. այսպես Հ, Պ, Ն, Չ, Չ (արձ. № 3): Այս վերջինս սովորական կանոնից դուրս, գրված է ոչ թե զլիսատառով, այլ ձևագրական ձևով:

Այս արձանագրությունների հետազոտում կատարվելիք մանրակրկիտ ուսումնասիրությունը հնարավորություն կտա պարզել հայկական այդ հեռավոր գաղթօջախի բնակչությանը վերաբերող մի շարք հարցեր:

Р. М. ДЖАНПОЛАДЯН

АРМЯНСКИЕ ЛАПИДАРНЫЕ НАДПИСИ ПОВОЛЖЬЯ

(Р е з ю м е)

На основании изучения литературы об армянских надгробных памятниках, обнаруженных в Болгаре и Казани, а также архивных материалов и уцелевших могильных плит автор статьи впервые дает научную расшифровку десяти армянских надписей. Выясняется, что их подавляющее большинство относится к первой половине XIV в. (1308, 1318, 1321, 1335 и 1337 гг.). Надписи содержат интересный материал для изучения истории армянских поселений этого края.

R. M. DJANPOLADIAN

LES INSCRIPTIONS LAPIDAIRES ARMÉNIENNES DU BASSIN DE LA VOLGA

(Résumé)

L'étude de la littérature consacrée aux pierres tombales arméniennes découvertes à Bulgarie et à Kazan, des documents d'archives et des pierres tombales demeurées intactes a permis à l'auteur de l'article de réaliser pour la première fois le déchiffrement scientifique de dix inscriptions arméniennes. Il apparaît que la majorité de celles-ci remonte à la première moitié du XIV^e siècle (1308, 1318, 1321, 1335, 1337). Les inscriptions apportent d'intéressants matériaux pour l'étude de l'histoire des colonies arméniennes de cette région.

²³ Հ. Աճառյան, Անձնանունների բառարան: